

## ԿԱՐԾԻՔ

Մարիամ Մամվելի Շախմուրադյանի «Անապատի օդապարուկների» կառուցվածքը, ձևերը, թվագրությունը և գործառույթը» Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Աշխատանքը կատարվել է ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնում՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայկ Ավետիսյանի գիտական ղեկավարությամբ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից (181 միավոր) և 2 հավելվածից: Հավելված 1-ում ներառվել են 6 քարտեզ, 5 աղյուսակ, 12 դիագրամ, 78 նկարներ ու գծանկարներ: Հավելված 2-ը ներկայացնում է Հայաստանի օդապարուկների պատկերաշարը (արբանյակային 200 լուսանկար): Շարադրանքը՝ գրականության ցանկը ներառյալ, 130 էջ է, հավելված 1-ը՝ 96 էջ, հավելված 2-ը՝ 200 էջ: Հավելվածները հաջողությամբ լրացնում են ատենախոսության տեքստը, օգնում են շարադրանքի ամբողջական ընկալմանը:

Թեև օդապարուկների վերաբերյալ առաջին ուսումնասիրությունները հրատարակվել են XX դարի 20-ական թվականներին, մեր երկրում այդ խնդիրը գիտական հետազոտության առարկա է դարձել XXI դարում: Թեման արդիական է, իսկ հիշյալ հարցի պարզաբանմանը միտված քննարկվող աշխատանքն առաջին ծավալուն ուսումնասիրությունն է Հայաստանում: Այն միջգիտակարգային բնույթ ունի: Հեղինակի կողմից հաշվառվել, հետազոտվել և դասակարգվել են Հայաստանի Հանրապետությունում հայտնաբերված 200 օդապարուկներ, որոնց բնորոշ են հսկայական չափերն ու հնագիտական գտածոների սակավությունը: Բացահայտվել և ուսումնասիրվել են օդապարուկների տարածման շրջաններն ու դրանց աշխարհագրական միջավայրի հատկանիշները: Կատարվել են երկրաբանական, հնամարդաբանական, հնակենդանաբանական, հնաբուսաբանական հետազոտություններ,

ինչպես նաև օդապարուկների որոշ հատվածներ պեղվել են ու չափագրվել: Կատարվել է տիպաբանական վերլուծություն, օդապարուկների կառուցվածքային հատկանիշներն առանձնացվել են և դասակարգվել: Ստացված արդյունքները համադրվել են Առաջավոր ու Միջին Ասիայի մի շարք երկրներում օդապարուկների ուսումնասիրությամբ ստացված տվյալներին և արվել համապատասխան եզրակացություններ: Ատենախոսության հեղինակին հաջողվել է կազմել Հայաստանի օդապարուկների կատալոգը, որը մեզանում կատարվում է առաջին անգամ: Քննական վերլուծության են ենթարկվել օդապարուկների նշանակության վերաբերյալ նախկինում հայտնված տեսակետները (որոգայթներ, անասնապահական կառույցներ): Ատենախոսը շարադրում է նաև իր վարկածը՝ դրանք պաշտամունքային նպատակով գործածելու հնարավորության վերաբերյալ: Ասվածը թույլ է տալիս արձանագրել, որ ատենախոսության հեղինակը լուրջ աշխատանք է կատարել իր առջև դրված խնդրի պարզաբանման համար:

Ատենախոսության ներածությունում հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ընդգծվում են ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Ներկայացվում են նաև աշխատության աղբյուրագիտական հենքը, մեթոդը, գիտական նորությունը, կառուցվածքը:

Առաջին գլխում քննարկվում է օդապարուկների աշխարհագրությունը: Ներկայացվում են դրանց աշխարհագրական սփռվածության, քանակական բաշխվածության և բնատեսքի ուսումնասիրության արդյունքները: Հետագոտվում են օդապարուկների տեղադրության առանձնահատկությունները: Պարզվում է, որ դրանք հանդես են գալիս միայն Առաջավոր և Միջին Ասիայի որոշակի երկրների տարածքում (Հայաստան, Սիրիա, Հորդանան և այլն): Հայաստանում առանձնացվում են տարածքային երկու գոտի, որոնց մեջ ընդգրկված են քննարկվող հուշարձանների համապատասխանաբար 3 և 4 խմբեր: Կատարվում են այդ խմբերի աշխարհագրական ու ձևաբանական առանձնահատկությունների վերլուծություններ, որոնց հիման վրա արվում են համապատասխան եզրահանգումներ՝ քննարկվող կառույց-

ները Հայաստանում ի հայտ են գալիս համեմատաբար փոքր տարածքում, տեղադրված են լեռնալանջերին, ունեն ցրված կամ գծային տարածում:

Երկրորդ գլխում քննարկվում են օդապարուկների կառուցվածքն ու ձևերը: Օդապարուկները բնորոշվում են որպես մեծ չափերի քարաշեն կառույցներ, առանձնացվում են դրանց հիմնական չորս կառուցվածքային տարրերը՝ *քարաշարեր, մուտք, շրջապարիսպ, աշտարակներ*: Բերվում են կառուցվածքային բաղադրիչների նվազագույն և առավելագույն չափերը: Քննարկվում են օդապարուկների կառուցվածքի առանձնահատկությունները, քարերի շարվածքը, հատակագծային ձևերը (աստղաձև, մահիկաձև, սրտաձև և այլն): Պարզվում է, որ Հայաստանի օդապարուկները մեծ մասամբ զբաղեցնում են 1-3 հա տարածք, իսկ պատերն ունեն 0,7-0,8 մ միջին բարձրություն: Շրջապարսպին արտաքին կողմից կցված աշտարակները միշտ ավելի ցածր դիրքում են գտնվում, քան հիշյալ կառույցը: Օդապարուկների տարածաշրջանային առանձնահատկությունները վեր հանելիս ատենախոսն այն միտքն է հայտնում, որ Հայաստանի, Իրաքի, Հյուսիսային Սիրիայի օդապարուկների մեծ մասը դասական կառուցվածք ունի (գուգամիտող քարաշարեր, մուտք, շրջապարիսպ, աշտարակներ): Անդրադառնալով V-աձև կառույցներին, Մ. Շախմուրադյանը հետևում է այն հետազոտողներին, որոնց կարծիքով օդապարուկները չեն կարող նույնացվել V-աձև կառույցների հետ, քանի որ վերջինները շրջապարիսպ չունեն:

Երրորդ գլխում քննարկվում է հիմնախնդրի հնագիտական համատեքստը: Օդապարուկներին նշանակությունը հասկանալու և դրանց գործառնության ժամանակը պարզելու նպատակով տարբեր տարածաշրջաններում պեղումներ են կատարվել, այդ թվում՝ ատենախոսության հեղինակի կողմից (Հայաստանում): Այս բաժնում ներկայացվում են ինչպես օդապարուկների պեղումների արդյունքները, այնպես էլ դրանց հետ առնչվող հնագիտական այլ տիպի հուշարձանները՝ անվաձև կառույցները, կացարանների կուտակումներով յուրօրինակ բնակատեղիները, դամբանախմբերը, ժայռապատկերները: Ատենախոսության հեղինակը ներկայացնում է Թլիկ 1 օդապարուկը:

բուկի տարածքում իր ղեկավարությամբ կատարված պեղումների արդյունքները: Այստեղ ուշագրավ է գետնամուխ աշտարակի փայտե ծածկ ունենալու վերաբերյալ ձեռք բերված տեղեկությունը: Առաջին տեղամասի ստորին հորիզոնից վերցրած նմուշների ռադիոածխածնային հետազոտությամբ պարզվել է, որ դրանք վերաբերում են ուշ հելլենիստական և վաղմիջնադարյան ժամանակաշրջաններին: Երկրորդ տեղամասի պեղումներով բացահայտվել է, որ օդապարուկի շրջապարսպի ու կցակառույցի հիմքի քարերը դրված են բնահողի վրա: Հայտնաբերվել են խեցատներ, վանակատե գործիքներ, ծլեփներ, կենդանիների ոսկորներ: Խեցանոթների բեկորները վերաբերում են վերոհիշյալ ժամանակագրական միջակայքին: Կարևոր արդյունք է ստացվել Արագածավան 1 օդապարուկի շրջապարսպի պեղումներով (էջ 55): Պարզվել է, որ այն ունեցել է ընդամենը 0,5-0,6 մ բարձրություն: Հեղինակի եզրակացությունը, որ դրանով շրջափակված տարածքը չէր կարող վիթեր որսալու համար որոգայթ հանդիսանալ, մենք տրամաբանական ենք համարում: Տարբեր տարածաշրջանների օդապարուկների շրջակայքում դիտարկվում են անվաճ շինություններ, կացարանների կուտակումներ, դամբարաններ, ժայռապատկերներ: Որոշ դեպքերում ժայռաբեկորների վրա փորագրված են օդապարուկներ ներառող տեսարաններ, որոնք հուշում են ժայռապատկերների և օդապարուկների փոխառնչվածությունը: Մենք համամիտ ենք ատենախոսության հեղինակի հետ, որ հիշյալ բոլոր կառույցների համալիր հետազոտությունը կնպաստի օդապարուկների հիմնախնդրի պարզաբանմանը:

Չորրորդ գլխում անդրադարձ է արվում ժամանակագրության և թվագրության խնդիրներին: Այս բաժնում ի մի են բերվում տարբեր երկրների օդապարուկների վերաբերյալ առկա տեղեկությունները: Հնարավորության դեպքում կիրառվում են թե՛ հուշարձաններից վերցրած նմուշների ռադիոմետրիկ տվյալները, թե՛ հնագիտական շերտագրման մեթոդը: Շերտագրված գտածոների սղությամբ պայմանավորված, օդապարուկների թվագրության մասին կարելի է վստահաբար խոսել միայն տարբեր մեթոդներով ստացված տվյալների փոխհամաձայնության դեպքում: Քարակերտի,

Շենիկի, Արագածավանի որոշ օդապարուկների կառուցման ժամանակագրական վերին սահմանը ձգվում է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջից մինչև մ.թ. 16-րդ դարը: Ըստ ռադիոածխածնային հետազոտությունների արդյունքների՝ Դոմասար 4 օդապարուկից  $\approx 1$  կմ հեռավորությամբ տեղադրված կացարաններից մեկը վերագրվում է ուշ բրոնզի դարաշրջանին: Արագածավան 1 օդապարուկի մոտակա բնակատեղին վերագրվել է միջին բրոնզի դարաշրջանի թռեղք-վանաձորյան շրջափուլին: Ռադիոածխածնային հետազոտության արդյունքներով, Թլիկ 1 օդապարուկի աշտարակը գործածվել է մ.թ. 3-6-րդ դարերում, Թլիկ 2 օդապարուկի հարևանությամբ գտնվող բնակատեղին վերագրվել է միջին բրոնզի դարաշրջանին (թռեղք-վանաձորյան շրջափուլ) և այլն: Քննարկվում են նաև Հորդանանի, Սիրիայի, Սաուդյան Արաբիայի, Ուզբեկստանի ու Ղազախստանի օդապարուկների թվագրությունների հարցերը: Եզրակացություն է արվում, որ հնագույն օդապարուկները հայտնաբերվել են Հորդանանի տարածքում և վերագրվում են նոր քարեդարի վաղ փուլին: Որոշ ժամանակ անց դրանց մի մասը դադարում է գործել, իսկ որոշ օդապարուկներ վերակառուցվում են ու շարունակում օգտագործվել հետագա դարաշրջաններում: Այլ տարածաշրջաններում օդապարուկների այդչափ վաղ կառույցներ առայժմ չեն հանդիպում: Օդապարուկների և կից բնակատեղերի պեղումներով ձեռք բերված արդյունքների հիման վրա հետևություն է արվում, որ Հայաստանում դրանք կառուցվել են, հիմնականում, միջին և ուշ բրոնզի դարաշրջաններում, որից հետո, այս կամ այն չափով, շարունակել են գործածվել ընդհուպ մինչև զարգացած միջնադար:

Հինգերորդ գլուխը նվիրված է օդապարուկների գործառույթի խնդրին, որի կապակցությամբ հայտնվել են տարբեր տեսակետներ: Առավել տարածված տեսակետն այն է, որ քննարկվող կառույցները որոգայթներ են հանդիսացել: Մյուս տեսակետն այն է, որ դրանք անասնապահական նշանակություն են ունեցել կամ նախնական նշանակությամբ որսորդական կառույցներ են եղել, սակայն հետագայում գործածվել են կենդանիներ պահելու համար: Ատենախոսության հեղինակը մանրամասն քննում է այս երկու տեսակետները և հակվում հազվադեպ հանդիպող

մի երրորդ տեսակետի, որի համաձայն՝ օդապարուկները կարող էին պաշտամունքային նշանակություն ունենալ:

Օդապարուկների՝ որոգայթ հանդիսանալու տեսակետի հավաստիությունը ստուգելու ընթացքում ատենախոսը ցուցաբերում է քննական մոտեցում: Կատարվում է նախկինում բերված փաստարկների համակողմանի վերլուծություն: Քննության են առնվում ազգագրական վկայությունները, օդապարուկների տեղադրության ու կառուցվածքի առանձնահատկությունները, համեմատվում են օդապարուկների և որոգայթների կառուցվածքները, դիտարկվում են այն ժայռապատկերները, որոնցում առկա են օդապարուկով տեսարաններ, արձարծվում է տարածքում հայտնաբերված նետասլաքների խնդիրը: Հեղինակը գալիս է այն եզրակացության, որ որոգայթ հանդիսանալու տեսակետը հնագիտորեն չի հաստատվում:

Մարիամ Շախմուրադյանը գիտական հետազոտությանը հարիր քննական մոտեցում է ցուցաբերում նաև օդապարուկների՝ անասնապահական նշանակություն ունենալու տեսակետի հավաստիությունը պարզելու համար: Վերլուծելով Սաֆավիի (Հորդանան) ժայռապատկերներից մեկում առկա արխաջի փորագրությունը, ատենախոսության հեղինակը կառուցվածքային տարբերություններ է տեսնում ժայռի վրա պատկերված շինության և օդապարուկների միջև ու եզրակացնում է, որ դրանք չեն կարող նույնացվել (էջ 106): Անդրադառնալով Դ. Մալկինսոնի և նրա գործընկերների այն տեսակետին, որ առանց քարաշարերի օդապարուկները ծառայել են որպես արխաջներ, իսկ քարաշարերով օդապարուկները նախատեսված են եղել որսի համար, սույն աշխատության հեղինակը բացահայտում է հիշյալ հետազոտողների կողմից բերված վիճակագրության անճշտությունները և ցույց է տալիս, որ թե՛ քարաշարերով, թե՛ առանց քարաշարերի օդապարուկները նույն գործառույթն են ունեցել: Համեմատվում են նաև օդապարուկների և արխաջների չափերը, մատնանշվում է վերջինների տասնապատիկ փոքր մակերևույթ ունենալու փաստը: Եզրակացություն է արվում, որ օդապարուկների անասնապահական նշանակության օգտին բերված նախկին փաստարկները խնդրահարույց են:

Հինգերորդ գլխի վերջին էջերում ատենախոսության հեղինակը որոշ նկատառումներ է հայտնում օդապարուկների պաշտամունքային նշանակության վերաբերյալ, տեսակետ, որն առաջին անգամ հայտնել է Միխայ Կոբուսիկիչը քառորդ դար առաջ: Պաշտամունքը, իրոք, մեծ դեր է խաղացել հնադարյան հասարակությունների կյանքում: Մ. Շախմուրադյանը նշում է Հեմմայի սարահարթի ժայռապատկերների տեսարանները, որտեղ որոշ օդապարուկների ներսում միջազետքյան աստվածություններին բնորոշ կերպարներ և դիցաբանական թեմաներով տեսարաններ են դիտվում: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա Աղավնատուն 1 օդապարուկի աշտարակներից մեկում քարե շրջանի մեջ ներառված կոթող է հայտնաբերվել: Հիշյալ փաստերը վկայում են, որ օդապարուկները կարող էին ծիսա-պաշտամունքային նպատակներով գործածվել:

Եզրակացություններում ի մի են բերվել ատենախոսության հեղինակի ջանքերով հավաքված հնագիտական մեծածավալ նյութի վերլուծության արդյունքները: Հեղինակը գտնում է, որ տարբեր տարածաշրջանների օդապարուկների կառուցվածքային ընդհանրությունները խոսում են մշակութային փոխառնչություններով պայմանավորված երևույթի մասին: Չբացառելով շրջանառվող մյուս տեսակետները, ատենախոսը հակվում է օդապարուկների պաշտամունքային նշանակության վարկածին, վերապահումով, որ այն հնագիտական լրացուցիչ հիմնավորման կարիք ունի:

Ատենախոսության հեղինակը լավատեղյակ է քննարկվող թեման արծարծող գիտական աշխատություններին, որոնք, չնչին բացառությամբ, հրատարակվել են օտար լեզուներով: Օգտագործված գրականության ընդգրկուն ցանկում օդապարուկների վերաբերյալ հայերեն լեզվով հրատարակված գիտական միակ աշխատության հեղինակը Մարիամ Շախմուրադյանն է, փաստ, որն անկասկած ողջունելի է: Ըստ արժանվույն գնահատելով թեկնածուական սույն ատենախոսությունը, կկամենայինք նաև ներկայացնել որոշ առաջարկներ և դիտողություններ:

1 Առաջարկում ենք հետագա պեղումները կենտրոնացնել օդապարուկների եզրային եռանկյունաձև տարածքներում՝ սրանց գործառույթի պարզաբանման նպա-

տակով: Դա միաժամանակ կնպաստի աշտարակների մոտ կամ դրանց վրա գտնվող անձանց միմյանց հետ հաղորդակցվելու հնարավորության բացահայտմանը:

2 Օդապարուկների գործառույթի խնդիրը պարզաբանելիս, դրանց ծիսական-պաշտամունքային նշանակությունը կարելի է դիտարկել քիչ այլ տեսանկյունով: Բանն այն է, որ օդապարուկների անասնապահական նշանակությունը չի հակասում պատեհ առիթներով դրանց ծիսա-պաշտամունքային նպատակով գործածության հնարավորությանը:

3 Հարկ է հաշվի առնել թե՛ տվյալ հուշարձանի կառուցվածքի, թե՛ հետազոտվող տարածքի բնատեսքի փոփոխության հնարավորությունները: Եթե քարաշար կառույցների սկզբնական բարձրությունն ու լայնությունն ինչ-որ կերպ կարելի է մոտավորապես վերականգնել, ապա ակնհայտ է, որ օդապարուկների գործառույթը պարզելու համար դրանք ներառող տարածքների նախնական բնատեսքի և կենսաբանական միջավայրի վերակազմության կարիք է առաջանում:

4 Առաջարկում ենք *քարաշարեր* եզրի փոխարեն գործածել *նախամուտք*, *նախամուտքի քարաշարեր*, *նախամուտքի պատեր* կամ արդեն շրջանառվող *ուղղորդող պատեր* եզրերը: Կարելի է կիրառել նաև ցանկացած այլ եզր, պայմանով, որ այն բնորոշ լինի կառուցվածքային տվյալ բաղադրիչին:

5 Ցանկալի կլիներ Հայաստանի օդապարուկները հետազոտող միջգիտակարգային բնույթի արշավախմբերի կազմում ընդգրկել նաև ազգաբանների, որոնց դաշտային հետազոտությունների արդյունքները և տվյալ թեմայի վերաբերյալ գիտելիքները կարող են նպաստել օդապարուկների գործառույթի պարզաբանմանը:

6 Հարկ է ավելացնել հայերեն լեզվով գիտական հրատարակությունների քանակը:

Խորհրդատվության նպատակով արված մեր առաջարկները, հիմնականում, վերաբերում են հետագա անելիքներին և ամենևին չեն նսեմացում առաջին անգամ կատարված այս ընդհանրացնող և համալիր բնույթի ուսումնասիրության արժանիքները: Կարևորն այն է, որ Մարիամ Շախմուրադյանի սույն ատենախոսությունն ընթեր-



ները: Կարևորն այն է, որ Մարիամ Շախմուրադյանի սույն ատենախոսությունն ընթերցելուց հետո ինձ մոտ վստահություն առաջացավ, որ օդապարուկների հիմնախնդրով զբաղվող հայ հետազոտողների հաջողությունները դեռ առջևում են:

Ամփոփենք: Ներկայացված թեկնածուական ատենախոսության հեղինակը կատարել է արդյունավետ, ընդգրկուն և գնահատելի աշխատանք: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին: Սեղմագրում թվարկված հրապարակումներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթներն ու ամփոփ շարադրանքը: Այսպիսով, քննարկվող աշխատությունն ամբողջապես համապատասխանում է թեկնածուական ատենախոսության պահանջներին: Գտնում ենք, որ «Անապատի օդապարուկների» կառուցվածքը, ձևերը, թվագրությունը և գործառույթը» խորագրով թեկնածուական ատենախոսության հեղինակ Մարիամ Սամվելի Շախմուրադյանը լիովին արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս, պ.գ.դ.



Գ.Թումանյան

պ.գ.դ. Գ. Թումանյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն՝ Տ. Դավայան



28. 06. 2023 թ.